ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի հոկտեմբերի 31-ի, ժամը 14:00-ի նիստի
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Աշոտ Վարազդատի Մաթևոսյանի**, ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Սրբուհի Գառնիկի Իսրայելյանի**, ամբիոնի դոցենտներ, տնտեսագիտության թեկնածու **Մարե Վահանի Խաչատրյանի**, տնտեսագիտության թեկնածու **Էդգար Վահագնի Աղաբեկյանի,** ամբիոնի դասախոսներ, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Յուրիի Հովականյանի,** տնտեսագիտության թեկնածու **Մանե Հենրիկի Մաթևոսյանի «Կորպորատիվ ֆինանսների ներածություն» դասախոսությունների նյութերի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված դասախոսությունների նյութերն արդիական են: Ներառված թեմաները բավարար են ֆինանսական կառավարման ոլորտի վերաբերյալ հիմնարար գիտելիքների ձեռքբերման համար: Դրանք ամբողջությամբ նվիրված են կորպորատիվ ֆինանսների ծագման, զարգացման, անհրաժեշտության, ժամանակակից տեսությունների, ֆինանսական մենեջերի դերի, գործակալի խնդրի, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ձևավորման մոդելների, կորպորացիայի կապիտալի, դրա տեսակների, կառավարման առանձնահատկությունների, կորպորատիվ կազմակերպության գործունեության մուտքերի և ելքերի ընդհանուր նկարագրի, ֆինանսական շուկաների ու կորպորացիաների միջև ձևավորվող փոխհարաբերությունների ուսումնասիրությանը: Իսկ ստացված համապարփակ գիտելիքները ուղենշային հենք են ոլորտի սկսնակների համար:

Դասախոսությունների նյութերն ուղարկվել են 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության: Մեկ անկախ (արտաքին) փորձագետի կողմից ստացվել է դրական եզրակացություն, իսկ մյուս գրախոս փորձագետի եզրակացությունը վերադարձվել է հեղինակներին թերությունները շտկելու կամ պարզաբանում ներկայացնելու համար: Հեղինակների դիտարկումները ներկայացվելուց հետո դասախոսությունների նյութերն ուղարկվել են կրկնակի գրախոսության: Գրախոսը նպատակահարմար է գտել հրատարակության

երաշխավորության հարցը թողնել համալսարանում գործող համապատասխան իրավասու մարմնի տիրույթում:

Դասախոսությունների նյութերում ընդգրկված թեմաներն ամբողջությամբ համապատասխանում են «Ֆինանսներ» կրթական ծրագրում ներառված «Կորպորատիվ ֆինանսների ներածություն» կրթական մոդուլին և ընդգրկում են կրթական ծրագրով նախատեսված բոլոր թեմաները, որոնք անհրաժեշտ են ակնկալվող վերջնարդյունքին հասնելու համար: Դրանք համապատասխանում են ուսանողների մոտ ժամանակակից գիտական և գիտագործնական գիտելիքների ձևավորմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Ա.Ս.Սարգսյանը, դոցենտներ Ա.Վ.Գրիգորյանը, Վ.Կ.Աթոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների եզրակացությունները, ֆինանսների ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Աշոտ Վարազդատի Մաթևոսյանի**, ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Սրբուհի Գառնիկի Իսրայելյանի**, ամբիոնի դոցենտներ, տնտեսագիտության թեկնածու **Մարե Վահանի Խաչատրյանի**, տնտեսագիտության թեկնածու **Էդգար Վահագնի Աղաբեկյանի,** ամբիոնի դասախոսներ, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Յուրիի Հովականյանի,** տնտեսագիտության թեկնածու **Մանե Հենրիկի Մաթևոսյանի «Կորպորատիվ ֆինանսների ներածություն» դասախոսությունների նյութերի** երաշխավորել հրատարակության: Այն նախատեսված է «Տնտեսագետ» հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով: Համապատասխան գրիֆը ստանալուց հետո դասախոսությունների նյութերը հրապարակել էլեկտրոնային տարբերակով և տեղադրել ՀՊՏՀ պաշտոնական կայքում: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան